





«ԶԱՐԹՕՆԷ» ՕՐԱԹԵՐԻԹ

### «ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՒ ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ» ՄԱՍԼՈՅ ՄՐՅԱՆՔԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Հայ հրապարակագրության մեջ իրենց ներդրումը ունեցած Թորոս Թորանեանի ու Արմեն Յարությանի վաստակը գնահատելու միտումով, երեկ, 17 Յունիսի երեկոյեան, Թեքեան կեդրոնին մեջ տեղի ունեցավ գնահատանքի ձեռնարկ մը:

Ընդունելության ընթացքին խօսք առաւ «Զարթոնք» օրաթերթի պատասխանատու խմբագիր Պարոյր Աղապազեան, որ անդրադարձաւ հայ մամուլի անհրաժեշտութեան եւ անոր հիմնական դերակատարութեան: Ան նշեց, թէ հակառակ դարուն պարագումներուն եւ արհեստագիտական նուաճումներուն, մամուլը ընդհանրապէս եւ հայ իրականութեան մէջ յատկապէս իր տեղը չի վիշիբր ու կը մնայ պատմեշի վրայ: Պ. Աղապազեան աւելցուց, թէ մամուլի եւ այդ բնագաւառին մէջ գործողները իրենց ներդրումը կ'ունենան ազգային, մշակութային, հասկերտման եւ մարդակերտման գործընթացին մէջ եւ անոնք կը հանդիսանան հայ իրականութեան եւ միտքի թատերաբեմեր:

Անդրադառնալով 1988ին Թեքեան Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ հաստատուած «Վարդգէս Պալեան» եւ 1995ին «Զարթոնք» խմբագրութեան կողմէ տեղի ունեցած «Հայկապոն եւ Անահիտ Վարդիվառեան» մամուլ մրցանքին, ան ըսաւ, թէ ասոնք հաստատուած են նպատակ ունենալով գնահատել հայ գիրի ու մշակութային նուիրելիները: Ան շնորհակալութիւն յայտնեց Յակոբ Վարդիվառեանի, որ «Հայկապոն եւ Անահիտ Վարդիվառեան» մրցանքի մեկնեանս է:

Պարոյր Աղապազեան իր խօսքի ամառտին ներկայացուց 2002 տարուան մրցանակակիրները՝ Արմեն Յարությանեանն ու Թորոս Թորանեանը, որոնք իրենց ներդրումը ունեցած են հայ հրապարակագրական մարզին մէջ եւ իրենց վաստակով հարստացուցած են պայն:

Ապա ան Թորոս Թորանեանի յանձնեց այս առիթով պատրաստուած յուշանուէր մը, իսկ Արմեն Յարությանեանի երկրէն դուրս գտնուելուն պատճառով յուշանուէրը ստանձնեց Ժիրայր Դանիելեան:

Թորոս Թորանեան իր արտի խօսքը արտասանելով ըսաւ, թէ այս մրցանակին ընդմէջէն կը ներկայանան այն բոլոր հրապարակագիրներն ու «Զարթոնք» հիմնադիրներն ու խմբագիրները, որոնք իրենց անջնջելի դրոշմը դրած են այս բնագաւառին մէջ: Ան շեշտը դրաւ հայօրէն ապրելու եւ յառաջիկայ սերունդները հայկական ոգով թրծելու եւ հայեցի դաստիարակութիւն

շարժելու անհրաժեշտութեան վրայ: Ան գնահատեց այն բոլոր անձերը, որոնք այսօր հոսանքն ու վեր թիւմարելով կը պայքարին յանուն հայ գիրի, մշակութային արժեքներու պահպանման:

Ձեռնարկի ամառտին խօսք առաւ Յակոբ Վարդիվառեան, որ ըսաւ, թէ ինք հաւատարմով հայ թերթի ու մամուլի առաքելութեան, կը փորձէ իր ներդրումը ունենալ անոր հայապահպանման ու գոյատեւման մէջ:

Ան շնորհաւորեց մրցանակակիրները եւ շնորհակալութիւն յայտնեց մամուլի պահպանման գործընթացին մէջ իրենց ներդրումը ունեցող անձերուն:

ԻՐԱՆ

### ՎԱՐՉԱԿԱՐԳԻՆ ԴԵՄ ՅՈՅՑԵՐԸ ՇԵՏՉԵՏԵ ԿԸ ՄԵՂՄԱՆԱՆ

Իրանի մէջ վարչակարգին դէմ տեղի ունեցող բողոքի ցոյցերը երէկ մեղմացած են: Թէեւ Երկուշաբթի օր յաջորդաբար եօթներորդ գիշերն ըլլալով քանի մը հապար ցուցարարներ իրենց ինքնաշարժներով ճամբաները «ողողած են», յատկապէս Թեհրանի համալսարանին շրջակայքը, անոնց թիր նուազ էր քան նախորդող գիշերները, եւ ոստիկանութիւնը կը թուէր կացութիւնը հակակշիռի տակ պահել:

Անցնող շաբթուան ընթացքին, մեծ թիւով մարդիկ ձերբակալուած կամ վիրաւորուած են յատկապէս գերագոյն հոգեւոր պետ Այաթոլլա Ալի Խամենէիի հաւատարիմ պինդ պահակներու հետ բախումներու պատճառով: Սակայն յարւածութիւնը նուազած է ծայրայեղական Պահաձեւ եւ Անսար Հրզպալլա խմբակներուն դէմ ոստիկանութեան ձեռնարկած ճնշումներէն ետք:

Սակայն մինչ Թեհրան կը թուէր հանդարտիլ, ապահովութեան ուժերը երէկ տակաւին կը փորձէին նահանգային քաղաքներու մէջ կարգ ու կանոնը վերահաստատել:

Ըստ կարգ մը տեղեկութիւններու, արեւմտեան Համիտան քաղաքին մէջ Երկուշաբթի գիշեր տեղի ունեցած բախումներու ընթացքին 10 ոստիկաններ վիրաւորուած են: Ուսանողական «ԻՍԼԱՄ» լրատու գործակալութեան համաձայն, հոն 12 հոգի ձերբակալուած է:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ճէք Սթրո երէկ յայտնած է, թէ Իրանի մէջ քաղաքական փոփոխութիւնը կը թուի անխուսափելի ըլլալ, սակայն անոր պէտք է ձեռնարկեն իրանցիք եւ ո՛չ օտարներ:

Իրանի ղեկավարութիւնը նաեւ միջազգային գետնի վրայ ճնշումներու տակ կը գտնուի իր կորիզային ծրագրիին հարցով:

Ըստ ընդդիմադիր Իրանի Գիմադրութեան Ազգային Խորհուրդին մէկ անդամին՝ Ալի Ռիպա Ճեֆերպատէի, Իրանի կորիզային ծրագիրը իսկական սպառնալիք է շրջանային խաղաղութեան դէմ: Ան Վիեննայի մէջ ըսած է, թէ անիկա «շատ յառաջացած գերարդիական ծրագիր մըն է»:

(ԱՅՓ)

ՅՈՐԳԱՆԱՆ

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐԸ ԿԱՅԱՑԱՆ ՈՉ ՇԱՏ ՄԵԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԱՄՄՄՆ, 17 (ԱՅՓ).- Յորդանանի քուէարկողները ընտրութեան կեդրոններ ուղղուեցան Երեքշաբթի օրը՝ ընտրելու համար նոր խորհրդարանի 110 անդամներ: Յորդանանի մէջ խորհրդարանական վերջին ընտրութիւնները կայացած էին 1997ին:

Քուէարկութեան

կեդրոնները բացուեցան առաւօտեան ժամը 7:00ին: Քուէարկութեան մասնակցողներուն համեմատութիւնը մեծ չէր, հակառակ անոր որ կառավարութիւնը արձակուրդ յայտարարած էր քուէարկութեան օրը: Յորդանանի մէջ քուէարկութեան իրաւունք ունին 2,325,496 քաղաքացիներ:

Իսլամական Գործի ձակաւոր, որ սպառնացած էր պոլիթիք եւ թարկել ընտրութիւնները, մասնակցեցաւ 30 թէկնածուներով, որոնց կարգին է կին մը, առաջին անգամ ըլլալով:

### «ՎԱՆԱՅ ԶԱՆԵՒԻ ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ԶԱՅՏԱԳՐՈՒՄԵՐԸ

- ժամը 8:30  
Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- ժամը 8:45  
«Աստղեր»
- ժամը 11:30  
Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- ժամը 12:00  
«Խոհեր եւ մտածումներ»՝ Շահանդուխտ
- ժամը 3:00  
Արաբերէն յայտագիր. հարցազրոյց պատգեպոլի «Սաժես» խումբի խմբագրու Էլի Մըշէրէֆի հետ.
- ժամը 6:00  
«Շայ երգաշարի»
- ժամը 7:00  
«Վանանք»
- ժամը 8:00  
«Պատասխանեւ եւ շահե»

السفير  
النصار  
الذبيح  
الاستقبل  
الانصار

17 Յունիսի իրանական թերթերը գլխաւորաբար անդրադարձած են «Մուսթաքպալ» կայանի կեդրոնատեղիին դէմ պատահած խափանարարական արարքին եւ այդ առնչութեամբ տեղի ունեցող հետաքննութիւններուն եւ նախարարաց խորհուրդի ժողովին:

Պաղեստինեան տագնապը, Իրաքի մէջ ամերիկացի պինդութիւններուն դէմ գործադրուող յարձակումները եւ Իրանի մէջ ծայր առած բողոքի ալիքը կը հանդիսանան օրաթերթերուն գլխաւոր միջազգային լուրերը: «Լիուս» գրած է, թէ Ֆրանսա մտահոգութիւն կը յայտնէ «Մուսթաքպալ» կայանին դէմ կատարուած խափանարարական արարքին գծով, իսկ երկու տակաւինները կը ձերբակալուին հարցաքննութեան համար:

Ըստ թերթին, «տագնապի մթնոլորտը» կը ճնշէ նախարարաց խորհուրդի 17 Յունիսի նիստին վրայ: Պըրրի տակաւին վերապահ է միջնորդութեան դերակատարութեան նկատմամբ, իսկ փոքր վարչապետ Իսամ Ֆաբես վարչապետին պիտի այցելէ:

Ըստ «Նահար»ի, «Մուսթաքպալ»ի դէմ կատարուած արարքին հետաքննութիւնները պիտի հիմնուին լուսանկարչական գործիքի կողմէ առնուած նկարի մը վրայ: Թերթը գրած է, թէ նախագահ Լահուտ եւ վարչապետ Հաբիբի կը խոստանան գումարել խաղաղ եւ արդիւնաւէտ ժողով մը:

«Սաֆիր»ի համաձայն, Լահուտ կ'ակնարկէ, թէ կատարուած արարքին ետին կը կանգնին ծայրայեղական երկու խմբակցութիւնները: «Քիֆահ Արապի» դիտել տուած է, թէ ապահովութեան համար յարուած լուսանկարչական գործիք մը նկարած է գործողութեան նկար մը: «Մուսթաքպալ» օրաթերթին համաձայն, Փարիզ կը դատապարտէ կատարուած արարքը եւ կը պահանջուի ազգային միասնականութիւնը խաթարող սպառնալիքէն:

Ըստ թերթին, դատախազ Ատտուի կը յայտարարէ, որ հետաքննութիւններու արդիւնքներուն կանխատեսումը պարզապէս աճապարել կը նշանակէ: Լահուտ կը յայտարարէ, որ օրէնքը կարճ ժամանակաշրջանի ընթացքին չ'իրագործուիր, իսկ Պըրրի «Մուսթաքպալ»ի կը յայտնէ, որ

նախարարաց խորհուրդը պիտի գումարէ բնականոն նիստ մը, առանց հարցի:

Պաղեստինեան տագնապին առնչութեամբ «Մուսթաքպալ» գրած է, թէ եգիպտական պատուիրակութեան եւ պաղեստինեան խմբաւորումներուն միջեւ գումարուած հանդիպումներուն ընթացքին իսրայէլացիներուն հետ պինդուող հաստատելու համաձայնութիւններ չ'զգոյցան: Թերթը նշած է, թէ պաղեստինցիները կը մերժեն որեւէ պինդուող, եթէ չ'երաշխարեն, որ բռնարարքները պիտի կասեցուին եւ գերիները պիտի արձակուին:

Ըստ թերթին, ՄԱԿ կոչ կ'ուղղէ աշխատանք տանելու, որպէսզի պաղեստինցիները խաղաղութեան հասնելու յոյսը չ'կորսնցնեն:

«Քիֆահ Արապի»ի համաձայն, պինդուող հաստատելու առնչութեամբ եղած եգիպտական միջնորդութիւնը ձախողեցաւ, իսկ Ֆրանսի մերժեց բանակցիլ պաղեստինեան իշխանութեան հետ:

«Լիուս» դիտել տուած է, թէ Ապու Մապես Կապա այցելեց, իսկ արմատական կազմակերպութիւնները եգիպտական պատուիրակութեան փոխանցեցին քաղաքացիները իրենց գործողութիւններուն թիրախ դարձնելու համաձայնութիւնը:

Ըստ թերթին, Եւրոպա Համախի կոչ կ'ուղղէ կրակ դադարեցնելու, իսկ Ուաշինկթըն կ'ողջունէ պինդուողը: Շարուն իր ճշմարտօրապէս կը պարտադրէ Պուշի պատուիրակին յայտարարելով, թէ պինդութեան պիտի չ'կատարէ:

«Տիար» նշած է, թէ Շարուն յայտնեց, որ ոչինչ պիտի տանք եթէ բռնութիւնը շարունակուի: «Նահար»ի համաձայն, եգիպտական պատուիրակութիւնը Պէյրութ եւ Դամասկոս կ'այցելէ: Ամերիկա Համախի կը պահանջէ պինդութիւն տալու:

է պինդուող հաստատել, իսկ Փաուլը Իսրայէլ պիտի այցելէ Ուրբաթ օր:

Թերթը նշած է, թէ Վուլֆ խորհրդակցութիւններ ունեցաւ իսրայէլացի պատասխանատուներուն հետ. Շարուն նշեց, թէ Իսրայէլ պաղեստինցիներուն ոչինչ պիտի տայ, եթէ պաղեստինցի իշխանութիւնը կազմակերպութիւններուն դէմ պայքար չ'ընէ:

«Մուսթաքպալ» դիտել տուած է, թէ Շարուն կը յայտարարէ, որ իսրայէլացիներուն ապահովութիւնը երաշխարարութեամբ պիտի կասեցուին դէմ պատերազմով:

Իրաքի մէջ տեղի ունեցող յարուած մթնոլորտին անդրադառնալով «Նահար» գրած է, թէ Իրաքի մէջ ամերիկեան փոխադրակառքեր թիրախ կը դառնան յարձակումներու, իսկ դաշնակից ուժերը կը հետապնդեն պատասխաններուն դիմադրութեան ուժերը:

Ըստ «Լիուս»ի, Ֆալուժայի ամերիկեան ուժերու կեդրոնատեղիին մէջ երեք պայքարումներ տեղի ունեցան: 7 ամերիկացիներ վիրաւորուեցան երկու փոխադրակառքերու դէմ կատարուած յարձակումներուն ընթացքին:

«Անուար»ն շեշտեց, թէ Պաղեստին մէջ փատաբանները բողոքի ցոյցեր կազմակերպած են պահանջելով նիւթական օժանդակութիւն տրամադրել ժողովուրդին:

Իրանի մէջ ծայր առած բողոքի ալիքին մասին «Սաֆիր» գրած է, թէ Թեհրան պաշտօնապէս կը բողոքէ ամերիկեան միջամտութեան դէմ, իսկ Ուաշինկթըն կը հերքէ ցուցարարներուն հետ կապ ունենալու մասին շրջան ընող լուրերը:

Ըստ «Լիուս»ի, Եւրոպական Միութիւնն ու Կորիզային Ուժանիքի Միջազգային Գործակալութիւնը Թեհրանի կոչ կ'ուղղեն միջազգային քննիչներուն արտօնութիւն տալու:

**AIR-KOOL**  
air-conditioning



**Be COOL with AIR-KOOL**

THE SUPER SILENT BRAND NEW HEAT-PUMP A/C WITH WARRANTY  
**Starting 250\$**

Sole Agent:  
**G. Ayanian & Sons**  
Dora, (01)255222/3/4/5/6 - Gemmayzé, (01)447000-445396 - (03)627728/9  
Fax: (01)265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb  
www.ayanian.com

**ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ ԱՌԱՅԻՆ ԱՆՊԱՄ ԲԼԱՍԿՈՎ**  
**ԲԱՅԱՌԻԿ ԵՆՈՐԵԱՆ ԵՐԶԱՊՏՈՅ**  
ԴԵՊՒ ԼԱԹԱԵՒԱ, ԵԵՍԱՊ, ՉԱԼԱՏՈՒՄԱՆ, ՍԿԻՐԵՆ, ՍԵՒ ԱՂՐԻՐ, ՏԻԶԱՂԱՑ, ԳՈՐԳԻԵ, ԶԻՍԱՐՏԻ, ԵԹԻՉՈՒԼԵ, ՊԱՃԱՄԱՅԱ

Ա. կարգի պանդոկ, ցախաձաշ, ընթրիք, տնոլ զուճառով խրախմանք, քարձ Ծուկ, համադամ աղանդեր, խորովածի տեսակներ, ուիսքի, օդի, գարեջուր

Նաւակով «Արուտ» կղզին այցելութիւն, շքեղ օդորոշմանով AC, TV, սառնարանով, զին մէկ անձի միայն 85 \$:

Մի՛ մոռնաք 29 Յունիսին միօրեայ շրջապտոյտ դէպի Դամասկոս, Մեճապա, Մալուլա եւ ձաշ Պլուտոսի շքեղ ձաշարանի մէջ, նուագախումբի եւ յայտնի երգիչ - երգչուհիներու մասնակցութեամբ: Առատ եւ համադամ աղանդեր, առաւել երեք տեսակ խորոված, բաց խմիչք՝ ուիսքի, օդի, գարեջուր, միայն 25 \$:

15 - 29 Օգոստոս Համահայկական խաղերու առիթով Երեւան, Մեճապա եւ Երզրակոթ լճան յայտագիրով, զին փոխան 1100 \$-ի միայն 625 թէն սկսեալ, վիզաները, տուրքերը ներառեալ: ԱՇԵՆԱՆ ԶՈՒՐՉ. Հեռ. 01 - 261177 / 01 - 240657 եւ 03 - 233978:

**Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՎԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**

**30 ԱՄԵՐԿԱԿ**  
**ՏՕՆԱԿԵՍԱՐԻԹԻԹԻՒՆ**

Կը բանախօսեն՝  
**ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ**  
Հ.Յ.Դ. Լիբանանի Կ.Կ.ի անդամ

**ԸՆԿ. ԱԼՊԵՐԹ ԱՃԵՄԵԱՆ**  
Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ

• Գեղարուեստական Յայտագիր

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի 24 Յունիս 2003ի երեկոյեան ժամը 8:00ին. Յակոբ ՏԵՐ Մանրնեանի հանդիսասարսափին մէջ:

ՏՐԱԲԵՐ



ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԼԿԱՏԱԱՄԲ Ը. Յ. ԴԱՃԵԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ

# ԱՅԴ ՅՈՅՅ ԿՈՒ ՏԱՆ ՄԵՐ ՍՏԱՆՉՆԱԾ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԲՆԱԳԱԲԱՌՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը այս տարուան առաջին վեց ամիսներին ամբողջացրեց ընտրական յաջողական հանգրուանները՝ նախագահական, երկու փուլով, սահմանադրական փոփոխությունները հանրաքույլի վրա խորհրդարանական:

Ընտրությունները որակին ու անոնց ընթացքին արձանագրուած դրական եւ ժխտական իրադրձություններուն կապակցութեամբ մեր ըսելիքները ըսինք արդէն ու հիմա ժամանակն է, որ ամբողջութեամբ ձեռք բերուած նուաճումները, ի հարկին հիմնական քննութեան ենթարկուին արձանագրուած թերացումները ու սրբագրուին, որպէսզի այն արժէքը, ժողովուրդը, որուն անունով կը կատարուին այս բոլորը, կարենայ իրեն լիարժէք քաղաքացի իր մասնակցութիւնը բերել հայրենիք բարգաւաճումին:

Սկզբունքային հասկացութիւն է, որ որեւէ քաղաքական կուսակցութեան հիմնական նպատակը գործադիր իշխանութիւն ձեռք առնելն է, որպէսզի իրագործէ իր գաղափարաբանութեան վրայ հիմնուած քաղաքացիները: Ինքզինք լուրջի առնող որեւէ կուսակցութիւն պէտք է վարանի ընդունելու այս պարզ ճշմարտութիւնը:

Ժամանակն է անգամ մը եւս ընդգծելու, որ Հ. Յ. Դաշնակցութեան համար գործադիր իշխանութեան մասնակցիլը ինքնանպատակ չէ եղած երբեք: Ժողովուրդն է անոր գործունէութեան կիզակէտը ու իրեն աշխատանք, Դաշնակցութիւնը երբեք չէ վարանած ծանրագոյն պատասխանատուութենէ իսկ: Մեր պատմութիւնը այդ կը վկայէ, որ մեր ժողովուրդին համար ամէնէն տազանապալի պահերուն, Դաշնակցութիւնը միշտ գտնուած է ճակատի առաջին իսկ գիծին վրայ:

Հանրութիւնը տեղեկացաւ արդէն, թէ Հայաստանի նորընտիր կառավարութեան կազմէն ներս ինչ փոփոխութիւններ տեղի ունեցան անցնող քանի մը օրերու ընթացքին: Կարգ մը նախարարներ մնացին իրենց պաշտօններուն (կամ տակաւին կը մնան), իսկ ուրիշներ փոխւեցան ու նորեր եկան ստանձնելու տուեալ բնադաւառի պատասխանատուութիւնը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը ստանձնեց նախարարական երեք ընկալաւոր՝ գիւղատնտեսութեան, ընկերային ապահովութեան եւ առողջապահութեան: Հիմնական հասարակաց կէտ մը կայ այս երեք նախարարութիւններուն միջեւ: Եւ այդ կէտը կը վերաբերի դարձեալ ժողովուրդին, որ մեր աշխատանքներուն կիզակէտն է: Տարբեր է, օրինակ, արտաքին գործոց, ելեւմտական, կամ կառուցային փոփոխութիւններու նախարարութիւններու պարագան, որոնք ուղղակի առընչութիւն եւ առօրեայ կապ չունին ժողովուրդին հետ՝ պետութեան համար կենսական նշանակութիւն ներկայացնելով հանդերձ:

Սակայն Դաշնակցութեան ստանձնած երեք նախարարութիւնները ուղղակիորէն կ'առնչուին ժողովրդային զանգուածներուն, անոր առօրեային, անոր ղեկավարութիւններուն ու խնդիրներուն: Եւ ծանր է այս երեք նախարարութիւններու լուծելիք օրակարգը: Կայ կենսաթոշակներու չափի հարց, կայ գանձաբարձրացնելու կամ օրին կարիքաւորին հասցնելու հարց, կայ տուեալ համակարգը բարեփոխելու հարց, կան զիւղացիին առօրեայ խնդիրները՝ կապուած իր հողին, գայն արտադրութեան արդիւնաւէտ ու շահաբեր միջոցի վերածելու իմաստով, կայ ձրի առողջապահութեան զրուցենէ փաստօրէն գրկուած մեր ժողովուրդի հարցերը լուծելու խնդիր ու այս բոլորին վրայ կը բարդուին խորհրդային օրերէ ժառանգուած ու անկախութեան տարիներուն յաճախ ապաշնորհ ղեկավարումի հետեւանքով զարգացած ապօրինութիւնները, կաշառակերութիւնը, վարչական փոսխտը, պաշտօնեաներու կամայականութիւնները, որոնք կ'անդամայուծեն ամէն բարեշրջում ու ժողովուրդը կը վերածեն ոչ թէ նպատակի, այլ՝ միջոցի, սեփական շահեր ապահովելու համար:

Այո, Դաշնակցութիւնը չի վարանիր այս ծանր օրերու նոյնքան ծանր պատասխանատուութիւններէն, որովհետեւ երբ խնդրոյ առարկայ է ժողովուրդին բարեկեցութիւնը եւ բարօրութիւնը, կարելի չէ տարբեր ձեւով մտանալ հարցերուն: Մեր պայքարը ոչ միայն այս փոսխտին դէմ է, մեր պայքարը ոչ միայն կաշառակերութեան ու ապօրինութիւններուն դէմ է, այլ նաեւ ու մանաւանդ՝ յանուն եւ ի խնդիր ժողովուրդին է:

Դաշնակցութիւնը բարոյական այս հասկացութեամբ է, որ կը ստանձնէ իր պատասխանատուութիւնները նոր կառավարութեանէն ներս, քաջ գիտնալով հանդերձ, թէ այն բնագաւառները, ուր կոչուած են գործելու նախարարները, յատկապէս դաշնակցական նախարարները, վարդերով պարզուած չեն: Ամէն օր ժողովուրդին ղեկավարութիւնները եւ ղառնութիւնները յստի, անոր հանապազօրեայ մեծ ու փոքր խնդիրները լուծելու հրամայականը կը զրուի մեր նախարարներուն առջեւ:

Կը ձգտինք համատարած դարձնել այն հասկացութիւնը, որ պետական պաշտօնատարը (ըլլայ ան նախարար թէ ամենավարի իաւր պաշտօնեայ) ժողովուրդին ծառան է, ու մանաւանդ՝ հաշուետու է անոր: Հայաստանի ներքին քաղաքական կեանքին մէջ այս նոր որակը ամրապնդելուն կը ծառայէ նաեւ մասնայատուկ կերպով այս նախարարութիւնները ստանձնելու Հ. Յ. Դաշնակցութեան վճռակաժութիւնը:

«ԱՄՊԱՐԵԶ»

# ՍԵՓԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿԱՄՔԻ ԱՐԱՀԵՏՆԵՐՈՎ

Սփիւռքի համայնքներուն հարգանքով համար անհրաժեշտ է փոխանցանալու մը, գիտնալ թէ ի՞նչ կը կատարուի, փոխադարձաբար գորակցել: Տեղ մը քաղաքական աշխատանքը առաջնահերթութիւն է, ուրիշ տեղ՝ մշակույթի, կամ նորահաս սերունդի զանգուածային ազգային դաստիարակութիւնը: Հայաստանի ճանաչման կողքին, այս վերաբերումը մեզ կը տրամադրէ քաղաքի համարները եւ ինքնութեան պահպանման:

Քառասուն տարի ետք, քառասուն ութը ժամ վերադարձայ Հալէպ, նոյն եւ փոխուած համայնք մը: Փոխուած քաղաք մը, փոխուած եւ արդիական շէնքեր, փոխուած սերունդն: Զարմանալիօրէն պահպանուած հաւատք, անխառն հայկականութիւն, ներկայութիւն, մանաւանդ՝ ջերմութիւն: Քաղաքն Եփփէ Ազգային ձեմարանը նոյն տեղն էր, անցեալէն մնացած էր ծառ մը, գերիբապատ, քանի մը ճիւղեր եւ քանի մը դեռ կանաչ տերեւներ, երկաթեայ բոլորակ բազրիքով պաշտպանուած: Մնացեալը մեծ զպրօցն է, սպիտակ, քարաշէն, համալիր մը՝ հազար երկու հարիւր աշակերտի համար, միայն միջնակարգ եւ երկրորդական: Ներկայանալի գրասենեակներ, արդիական սարքեր, մարզադաշտ, պրադարան: Ազգային կեանքին մէջ կը մնան շրջանաւարտները, հայախօս եւ հայազիր, տեղական, եւրոպական կամ հայաստանեան համալսարաններ յաճախելէ ետք: Անոնցմէ շատեր արդէն ուսուցիչ են իրենց վարժարանին մէջ, գիտնուած երկրի համայնքարաններու վկայականներով: Անոնք

կուսակցական պաշտօններ կը վարեն, Ազգային Առաջնորդարանի ծիրէն ներս կը գործեն, տէր են Սուրիահայ Օգնութեան ինչի քառայարկ դարձանատան եւ յարակից կառույցներուն, ինքնաբաւ ըլլալու համար ունին ասեղնագործութեան եւ զպրօցական տարագներու արտադրութեան աշխատանոց: Ծեմարանը միակ կը թնկան մեծ հաստատութիւնը չէ: Կը գործեն Բարեգործականի եւ Կիլիկեան ճեմարանները, Միսիթարեանները:

Ուշագրաւ է Հայագիտական Ուսմանց գրեթէ համալսարանական հաստատութիւնը, որ կը վայելէ Կիլիկեան կեանքի հիմնարկութեան արդիականացումը, սրտին մօտ է Հիմնարկութեան տնօրէնին: Ուսանողները երկրորդական վարժարանի պետական վկայական ունին եւ ապագային հեշտութեամբ կրնան պաշտօնավարել հայկական վարժարաններու մէջ: Իմացանքը, բացի ուսանողներէ, հայ տիկիներու ղրմումին ընդառաջելով, հաստատուած է, ժամերու պատշաճեցումով, հայագիտական դասընթացք: Գիտակից հայուհիներ, աւելի որակաւոր հայկականութիւն մտցնելու համար իրենց յարկին տակ, կը հետեւին հայագիտական դասընթացքին: Վերաբերում՝ որ կը վկայէ հայկականութիւն պահող համայնքի մը մասին: Դասընթացքներու պատասխանատուները կը ձգտին Հայաստանի համալսարաններէն մէկուն հետ յանգիլ ճանաչման, որպէսզի, երկու տարի Հայաստանի մէջ հետեւելէ ետք հայագիտութեան, ստանան համալսարանական վկայական, գոր

Սուրիոյ կրթական նախարարութիւնը համապատասխան համարէ տեղական կոչումի եւ վաւերացում: Արձանագրենք անմիջապէս, որ այս հաստատութիւնը չի գործեր պետական վարկերով:

Սուրիահայ Օգնութեան ինչի կեդրոնը իսկական փեթակ է, իր բժիշկներով, ատամնաբուժով, տարրալուծարանով՝ այդպէս ալ գրուած է մուտքին, հոն խնամք կը ստանան հայեր, մատչելի գիներով, բայց նաեւ տեղացիներ, առանց ազգութեան կամ կրօնական խտրութեան: Խառնահիւնները հայկական ձեռարուեստի պահպանման եւ գարգացման կը նպաստեն, հայկական հին քաղաքներու ասեղնագործութիւնը կը ժողովրդականացնեն

եւ կը տարածեն, վանի, Մարաշի, Այնթապի... եւ իրենց աշխատանքներու նիւթական մատակարարումը մասամբ կը բաւարարեն: Աշխատանքը կը յաջողի, որովհետեւ հայ կիներ, երիտասարդ եւ նուազ երիտասարդ, ներկայ են օրն ի օրն, կը հաւատան իրենց գործին, կը յաջողին եւ հպարտ են իրենց իրականացումներով:

Այս թուումը անկատար պիտի ըլլայ եթէ չիօսուի Արամ Մանուկեան Կեդրոնի մասին, քաղաքի գեղեցիկագոյն թաղամասերէն մէկուն մէջ, ուր խմբուած են բազմաթիւ միութիւններ, իրենց ներկայանալի ժողովատեղիներով, ուր կան դասախօսական եւ հանդիպման սրահներ: Ծաշարան եւ դալար տանիք, ուր, ամէն երեկոյ,

մեծ թիւով հայեր կը հանդիպին իրարու, կը հաստատուին մարդկային կապեր, կը ստեղծուի համագործակցութեան միջոցառում: Այս կեդրոնը ունի նաեւ հիւրերու համար հանգստաւէտ պայմաններով օժտուած յարկ, եւ թերեւս ուրիշներու կողմէ երկրորդական համարուած խնայողութեան կը նպաստէ:

Դեռ պէտք է խօսիլ Ազգային Առաջնորդարանի, տպարաններու, հրատարակչութեան մասին: Օրինակելի այս գաղութի մասին ամբողջական ռեփորթաժ մը պիտի ծառայէր անոր ծանօթացման, բայց նաեւ խմբուած ուրիշներու, օգտուելու համար փորձէն եւ փորձառութեան:

ԽԱՎԿԱ ՄԿՐՏԻՉԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն: - 258526, 260115 եւ 241274:



Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւրը փոխելու կամ գանոնք լուալու պարագային: Երբ մագուր պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍՄՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Գամուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»ի մօտ
- ▶ SPEED - Գանքաշ, Կալէրի Իթիհատ
- ▶ ՅԱՅՎԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Գաթի Դաուարն
- ▶ MALLAH - Պապիմ
- ▶ MALLAH - ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆի, Ս. Յակոբ Եկեղեցու մօտ
- ▶ SAAD - Մար Միայել
- ▶ SPEED - Նահր, «Փօօօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապուտք

# FUEL CARDը գործածեցէք



# ԻՐԱԲԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Քուէյթի ազատագրութեան առաջադրանքով Իրաքի դէմ դաշնակից երկիրներու շրջապատում ծածկող զորքերի անարտոնական արձագանքը, որոնք սակայն արեւմտեան մէջ ճգնաժամային իրադրութիւններու թատերաբեմ դարձաւ, երբ չիինքն ու քիւրտեր ապստամբութեան դրօշ պարզեցին, որոնք սակայն արեւմտեան մէջ ճգնաժամային իրադրութիւններու թատերաբեմ դարձաւ:

## ՇԻՆՆԵՐՈՒ ԵՒ ՔԻՒՐՏԵՐՈՒ ԱՊՍԱՍՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոցի երկրորդ պատերազմի աւարտին, դաշնակից բանակներու կողմէ Քուէյթի ազատագրութեան և հարաւային Իրաքի սահմաններէն ներս յաղթական մուտքէն ետք, 28 Փետրուար 1991ին զինադուլ հաստատուեցաւ: Առիթը յարմար նկատելով՝ հարաւ մէջ չիինքն եւ հիւսիսի մէջ քիւրտեր ապստամբութեան դրօշ պարզեցին: Մարտի առաջին օրերուն Պասարայի փողոցներուն մէջ, չիինքնուն եւ բանակին միջեւ բուռն բախումներ ծայր առին: Երկուստեք բազմաթիւ զոհեր ինկան: Բանակը ծանր կորուստներու ենթարկուեցաւ եւ մօտաւորապէս հարիւր հրասայլեր քանդուեցան: Միաժամանակ խռովութիւններ բարձրացան Ամարայի, Սամաուայի, Նասիրայի, Տիւրանիայի, Քուէթի, Քարպալայի եւ Նաճաֆի մէջ:

Քիւրտ ընդդիմադիր ղեկավար եւ Քիւրտիստանի Հայրենասիրական Միութեան ղեկավար Ճալալ Թալապանի, որ Սուրիա ապստանած էր, հիւսիսային սահմանէն Իրաք մտաւ, արագորէն կազմակերպեց իր ուժերը եւ ապստամբութեան ձեռնարկեց: Ըմբոստներ առաջին հերթին Սիւլէյմանիէն իրենց հակակշիռին տակ առին:

Ստեղծուած կացութեան առջեւ Սատտամ Հիւսէյնի հրահանգով Հանրապետական պահա-

# ԾՈՑԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԵՆ ԵՏՔ ԻՐԵՐԱՅԱԶՈՐԴ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ, ԲՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲՈՆԱԳԱՂԹԵՐ

Սակայն հիւսիսի մէջ խռովութիւնները աւելի սաստկացան, տարածուեցան եւ քանի մը օրուան ընթացքին քիւրտեր գրեթէ ամբողջ Իրաքեան Քիւրտիստանը (բացի Մուսուլի շրջանէն) իրենց հակակշիռին տակ առին:

Մարտի վերջաւորութեան իրաքեան բանակը եւ Հանրապետական պահակազուհը լայնածաւալ յարձակողականի անցանքիւրտերուն դէմ եւ Ապրիլի առաջին օրերուն գրաւեցին Քերքուքը, Արպիլը, Ջախոն, Սիւլէյմանիէն եւ քիւրտական ու կենսաբանական զէնքերով ուժեղացրին քրտական բնակավայրերը՝ սկսան յառաջանալ բարձրաւանդակները: մէկ շաբթուան ընթացքին մօտաւորապէս հարիւր հազար քիւրտեր գոհուեցան: Քիւրտեր խուճապահար ձգեցին իրենց տունն ու տեղը եւ անօթի ու ցրտահար, զանգուածաբար փախան դէպի ձիւնապատ ամառի լեռներ, ձորեր, եւ՝ դէպի Թուրքիա ու Իրան: Ճալալ Թալապանի արագորէն հեռացաւ Իրաքէն:

Ապստամբութեան ճնշումէն ետք, քիւրտերը պաշտպանելու պատրուակով Ապրիլ 19ին ամբրիկացի եւ դաշնակից 17,500 զինուորներ մտան հիւսիսային Իրաք եւ 36րդ զուգահեռականէն հիւսիս տարածուող շրջանը չէզոք գօտի հռչակեցին: Օտար միջամտութիւնները դիմագրաւելու համար Սատտամ Հիւսէյն անմիջապէս վերադարձի հրահանգներ ուղղեց Ճալալ Թալապանիի եւ Մատուլ Պարզանիի եւ ընդառաջեց քիւրտերու ինքնավարութեան պահանջներուն:

Այս հիմամբ քրտական ինքնավարութեան մարմիններ հաստատուեցան եւ 23 Մարտ 1992ին քրտական ինքնավար խորհրդարանի առաջին ընտրութիւնները տեղի ունեցան 105 երեսփոխաններու համար, որոնք հարիւր քիւրտ, չորսը՝ աշուրի եւ մէկը՝ փոքրամասնութիւններէն:

Հիւսիսի նման, դաշնակիցներ հարաւային Իրաքը եւս, 32րդ զուգահեռականէն հարաւ տարածուող շրջանը օգնականներու համար արգիլեալ գօտի հռչակեցին: Այնուհետեւ օգնականային թռչիւնները արգիլուեցան Իրաքի վերեւ:

Շիիններուն բարձրացուցած խռովութիւնները թէեւ զինու զօրութեամբ զսպուեցան 1991 Մարտին, բայց մեծ թիւով ընդդիմադիրներ



Գաղթ դեպի ապահով վայրեր

ապստանեցան հարաւային ճահիճներու, խիտ եղջերուտներով ու արմաւենիի անտառներով ծածկուած շրջանները, ցեղախումբերուն մօտ: Նշենք, որ պատմութեան ընթացքին ճահիճներու շրջանը միշտ ալ անմատչելի մնացած է բոլոր նուաճողներուն եւ շրջանին շիի բնակիչները, որոնք մատաղ կամ թիփակեաց արար կը կոչուին, միշտ ալ պահած են իրենց անկախութիւնը:

Շիիններու խռովութիւնները պարբերաբար կրկնուեցան եւ սաստկացան յատկապէս 1992ի ամառն եւ աշնան: Բախումներ արձանագրուեցան նաեւ շիի հակամարտ խմբաւորումներու միջեւ: Ինկան բազմաթիւ գոհներ:

Միաժամանակ խռովութիւններ բարձրացան քրտարնակ շրջաններուն մէջ, հակամարտ ցեղախումբերու ու խմբաւորումներու միջեւ: ՔԱԿի զինակները, թրքական բանակէն հալածական տարբեր առիթներով հիւսիսային Իրաք ապստան գտան, բայց այս անգամ իրենց դէմ գտան Մատուլ Պարզանիի եւ Ճալալ Թալապանիի զինակները: միջբրտական կռիւներուն ինկան հազարէ աւելի զոհեր: Միաժամանակ եւ հետագային, յատկապէս 1996-1997 տարիներուն Պարզանիի եւ Թալապանիի հակամարտ կազմակերպութիւններուն միջեւ արիւնահեղ կռիւներ մղուեցան:

## ԲՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲՈՆԱԳԱՂԹԵՐ

Սատտամ Հիւսէյն, ընդդիմադիրները եւ յատկապէս չիինքնները ճգնաժամ համար ձեռնարկեց զանգուածային ձերբակալութիւններու: տասնեակ հազարաւորներ բանտերը լեցուեցան: Տարապալման կացութեան մէջ, յաճախ ջուրով լեցուն յատկով ապականած նկուղներու եւ զնտաններու մէջ նետուած բանտարկիչ շարքարանքները առօրեայ երեւոյթի վերածուեցան: Հազարաւորներ եւ տասնեակ հազարաւորներ հաւաքաբար սպանուեցան կամ անհետացուեցան: մահապատիժի գործարարութեան սովորական ձեւերէն մէկը դարձաւ մահապատի մարմինի վրայ ձեռնառումը կապել եւ պայթեցնելով սպաննել գայն:

Հակառակ ի գործ դրուած հալածանքի ու սարսափի ամէն տեսակ միջոցառումի, հարաւի ճահիճներու շրջանը կը մնար ընդդիմադիրներու ապստանարան: Ճահիճները մաքրելու եւ ընդդիմադիրները ապստանարանէ զրկելու դիտաւորութեամբ կառավարութիւնը 1992 Դեկտեմբերին հրապարակեց հարաւային Իրաքի մէջ Եփրատի եւ Տիգրիսի հունը փոխելու եւ Սատտամ Հիւսէյն անունով 565 քիլոմետր երկարութեամբ արուեստական գետ մը կազմելու ծրագրը, սկզբունքով՝ նաւարկութեան, խոպան ու անմշակելի հողերու իւրացման եւ ոռոգումի նպատակով, բայց մանաւանդ՝ ճահիճները չորցնելու նկատառումով: Ծրագիրը, որ կը սպառնար շրջանի իւրաքատուկ, գեղեցիկ բնութեան, կենդանական աշխարհին, կենսոլորտին ու բնակչութեան գոյութեան, բարբախտաբար կարելի չեղաւ իրականացնել:

Սատտամ Հիւսէյն միաժամանակ ձեռնարկեց ճահիճներու բնակիչները բռնագաղթի մղելու քաղաքականութիւն: հարիւր հազարաւորներ ցրուեցան եղան, շատեր փախան Իրան, ոմանք՝ Պարտաւ, Պասրա եւ այլ քաղաքներ:

Բռնագաղթի եւ նաեւ՝ արտագնան քաղաքականութիւնը հետեւողականօրէն կիրարկուեցաւ մանաւանդ հիւսիսի մէջ, քիւրտերուն, աշուրիներուն եւ թուրքմէններուն դէմ: Կառավարութիւնը սրապարակեց նաեւ չնաշխարհիկ որոշում մը, որուն համաձայն աշուրիները Իրանէն եկուորներ նկատուեցան եւ անոնցմէ շատեր Իրանի սահմանը քշուեցան (թէեւ անոնք Միջագետքի հին բնիկներ են. անոնցմէ շատեր մինչեւ Ա. Աշխարհամարտը վասպուրականէն հարաւ կը

բնակէին, ուրկէ բռնագաղթուելով անցան Իրան եւ հոնկէ՝ հիւսիսային Իրաք):

Տարիներու շրջափակումը, տնտեսական տագնապը եւ գործազրկութիւնը պատճառ դարձան արտագաղթի. շատեր մեկնեցան արաբական այլ երկիրներ, Իրան (յատկապէս չիինքնու պարագային), ոմանք, մանաւանդ քրիստոնեաները՝ Միացեալ Նահանգներ, Քանադա, Աւստրալիա, Շուէտ եւ եւրոպական այլ երկիրներ: Շրջափակումը նաեւ պատճառ դարձաւ շարք մը կենսական ապրանքներու ու դեղերու չզրոյթութեան, որուն պատճառով մահաւոր համեմատութիւն ստացաւ մանաւանդ մանուկներու մահացուութիւնը:

Սկզբունքով աշխարհիկ կառավարութիւնը հետեւողականօրէն համայնքային խտրական քաղաքականութիւն կիրարկեց: Մեծամասնութիւն կազմող չիինքնուն առջեւ փակ մնացին պետական եւ զինուորական բարձր եւ պատասխանատու պաշտօններ. անոնց արգիլուեցաւ Աշուրայի սպասուինքն: Մեծամասնականութիւնները: Թուրքմէնները զանց առնուեցան իրրեւ փոքրամասնութիւն եւ հետեւողական հալածանքի ենթարկուեցան: Կառավարութիւնը աշխատեցաւ երկփեղկում յառաջանել քրիստոնեաներուն, յատկապէս՝ քաղղէացիներուն եւ ասորեստանցիներուն միջեւ (թէեւ անոնք նոյն ժողովուրդն են. 1552ին աշուրիներուն կաթոլիկ դարձած հատուածը քաղղէացի անունով ու հալածանքներով անոնց թիւը զգալիօրէն նուազեցաւ, որուն մէջ մեծ դեր ունեցան մանաւանդ քիւրտերը. միայն Իրաք - Իրան պատերազմի տարիներուն եւ մինչեւ Քուէյթի պատերազմը մօտաւորապէս տարւոյց հազար քրիստոնեաներ քշուեցան եւ սպանուեցան, եւ 400 գիւղեր քանդուեցան: 1991ին աշուրի 52 գիւղեր քանդուեցան քիւրտերու ձեռքով. այնուհետեւ, յատկապէս 1993ին եւ 1995էն 1997 տարիներուն բազմաթիւ ահաբեկչութիւններ կատարուեցան քրիստոնեաներուն դէմ եւ Ասորեստանի Դեմոկրատական կուսակցութեան (Չուրա) ղեկավարներէն, մանաւանդ՝ զինուորական պատասխանատուներէն շատեր բանտերը լեցուեցան եւ սպանուեցան: 1999ին քրիստոնեայ յիսուս գիւղերը գրաւեցան եւ քիւրտերով վերաբնակեցուեցան: 18 Փետրուար 2001ին Արպիլի աշուրի կառավարիչը Ֆրանսո Հարիրի սպանուեցաւ: 2001 տարիներուն քրիստոնեայ հողատէրեր, կրօնաւորներ ու երկու կրօնաւորականներ սպանուեցան: Այս բոլորին պատճառով մօտաւորապէս 250 հազար աշուրիներ հեռացան երկրէն: Կառավարութիւնը աշխատեցաւ նաեւ քրիստոնեաներուն թիւը նուազագոյնով ցոյց տալ. ասորեստանցի (աշուրի)՝ 30 հազար, քաղղէացի՝ 100էն 120 հազար, ասորի (սուրիանի)՝ 12 հազար եւ այլն: բայց ներկայիս, ոչ պաշտօնական տուեալներու համաձայն Իրաքի քրիստոնեաները մօտաւորապէս մէկէն մէկուկէ միլիոն կը հաշուեն:

Կառավարութիւնը խիտ հալածանք ձեռնարկեց նաեւ իրեն հակադրուած սիւնի ցեղախումբերուն եւ յատկապէս Պանու Թամիլներուն դէմ: Պանու Թամիլները արաբական ամէնէն հին, մեծ եւ ազնուական ցեղախումբերէն են, մօտաւորապէս մէկ միլիոն կը հաշուեն Իրաքի մէջ եւ յիսուսաբար երկրին կեդրոնական գօտիին մէջ կեդրոնացած են: մեծ թիւով Պանու Թամիլները բնակիչն նաեւ Մենապան Արաբիայի արեւելեան շրջաններուն, Քաթարի եւ այլ երկիրներուն մէջ: Արաբական պատմութեան մէջ մեծ դեր ունեցած ցեղախումբէն յիւնք Սուհամմէտ Ապստիլ Ուահապ, ուահապական դաւանանքի հիմնադիրը, որուն ուսմունքը Մէնապան Արաբիայի պաշտօնական դաւանանքն է, եւ որուն սերունդը՝ Ալ Շէյխ ընտանիքը կրօնապետական բարձրագոյն հեղինակութիւն ունի թագաւորութեան ներս: Քաթարի Ալ թանի էմիրներու ընտանիքը եւս Պանու Թամիլներու ցեղախումբէն է: Պանու Թամիլները հակադրուեցան անոր, եւ Սուհամմէտ շէյխերու ընտանիքը հեռացաւ երկրէն: Պանու Թամիլներուն դէմ ամէնէն խիտ հալածանքները սկսան Քուէյթի պատերազմի աւարտէն ետք, եւ ցեղախումբէն շատեր բանտերը լեցուեցան եւ անխնայ սպանուեցան: Սատտամ Հիւսէյնի անձնական հրահանգով ցեղախումբին ամէնէն հեղինակաւոր պետերէն շէյխ Թալէպ Սուհամմէտ 1994 Արաբիայի սպանուեցաւ Պէյրութի Իրաքեան դեսպանատան մէջ:



Քիւրտ ըմբոստներ

կազուէնդէն ջոկատները ղրկուեցան հարաւ-ստանդակելու բանակին: Մարտ 5ին, բուռն բախումներէ ետք, Հանրապետական պահակազուհը վերագրաւեց կարգ մը դիրքեր, որմէ ետք, երկօրեայ կատաղի կռիւներէ ու աւերածութիւններէ ետք չիինքնու ըմբոստութիւնը մեծ մասամբ ճգնուեցաւ:

## ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՑԵՂԱՆՈՒՄԲԵՐԸ

Հարաւային Իրաք, ճահիճներու եւ յարակից Պասարայի, Ամարայի, Նասիրայի եւ Սուգ Շիուի շրջանները միշտ ալ դժուար հակակշիռի շրջաններ եւ շիինքններու համար միջնաբերդեր եղած են: Աշխարհագրական այս գօտին կ'ընդգրկէ Եփրատի եւ Տիգրիսի վարից հովիտը՝ մինչեւ Տաքէլ Արապ, ուր ամենուրեք տարածուած են գետեր ու գետակներ (Քահալա, Սապիլա, Մաշրա, Մանարիա), առուներ, լիճեր ու լճակներ (Հաուր Աուտա, Հաուր Համար եւ այլն), անծայրածիր եղեգնուներ ու արմաւենիի անտառներ: Արեւմտեան բնակիչները մատակարար են՝ թփակեաց երկրագործներ, անասնապահներ ու ձկնորսներ, որոնք արւեստական կողակներու վրայ եղեգներով հիւսուած խրճիթներու մէջ կը բնակին, անասնապահներով կը ճամբորդեն, գոմէշ, ոչխար եւ շուրի ոնգեղջիւրներ կ'արածեն, բրինձ կը մշակեն եւ կարպետ կը հիւսեն: Մնացեալները կ'իսաքոչուոր ոչխարաբոյձ անասնապահներ են:

ՊԱՆՈՒ ՄԱՒԷՔՆԵՐԸ մատակարար են, որոնք զանազան ճիւղերու բաժնուած են՝ Ուատաի, Մանգու, Թուկիա, Տիուան, Մուսաֆիտա, Իպրահիմ, Ալլու Սալէհ, Ճահամ եւ Ահլ Սաաֆա: Անոնց կապուած են ցեղային երկու դաշնակցութիւններ՝ Պանու Խալապան եւ Մուսաբար: Ալլու Սալէհ տոհմէն Ռումէյիտ ընտանիքը շէյխեր են, իսկ Պանու Խալապանները իրենց առանձին շէյխերու ընտանիքը ունին՝ Մուղաշալա:

ԱՃՈՒԱՏՆԵՐԸ խոնուրը ցեղախումբ մըն են եւ քանի մը տոհմերու բաժնուած են: Անուատ Մանգա (ծագումով Հիւսիսէն), Ճուարից, Տարէֆաք եւ Ղազզի (հիւսիսային) եւ Պուտուր (ծագումով Անգուստերու Ռուսալա աշիրէթէն): Անցեալից Անուատ Մանգաներէն Ուաթլ ընտանիքը ընդհանուր ցեղապետութիւնը կը վարէր, որ հետագային փոխանցուեցաւ նոյն տոհմի Մանգա ընտանիքին: Մեծ հեղինակութիւն ունին նաեւ Ճուարիցներու Ղուպայի եւ Պուտուրներու Սահան շէյխերու ընտանիքները: Մեծամասնութեամբ կ'իսաքոչուոր ոչխարաբոյձներ են:

ՊԱՆՈՒ ԱՄՆԵՐԸ Իրաքի շիի ամէնէն մեծ եւ ազդեցիկ ցեղախումբերէն են եւ բազմաթիւ ճիւղաւորումներու բաժնուած են, որոնց գլխաւորներն են՝ Պալսեմ, Ճանգա, Քապա եւ այլն: Մեծ մասամբ Ամարայէն հիւսիս տարածուող Տիգրիսի փերուն եւ Իրանի սահմանամերձ շրջաններուն ու Պաղտատի մէջ կեդրոնացած են:

ԱԼՊՈՒ ՍՈՒՀԱՄՄԷՏՆԵՐԸ Զուպէյտիական ծագում ունին, ամէնէն հեղինակաւոր եւ հաւանաբար Իրաքի շիի ամէնէն մեծ ցեղախումբն են, որոնք կեդրոնացած են Տիգրիսի երկու փերուն, Ամարա, Մանար Քապիլ, Գարնա եւ յարակից շրջաններուն եւ Հաուր Համարի փերուն: Անոնց նախնիները շէյխ Մուհամմէտ Զուպէյտիի առաջնորդութեամբ ժեղաբուն սկիզբը Պաղտատի հարաւէն գաղթելով հարաւային շրջաններ նուաճեցին: Մեծամասնութեամբ երկշրջանները հաստատուեցան եւ ընդարձակ շրջաններ նուաճեցին: Մեծամասնութեամբ երկշրջաններն ու անասնապահներ են: Հոն զանգուածով կեդրոնացած են նաեւ Պաղտատի հարաւային թաղամասերուն եւ այլ թաղամասերուն մէջ: Կիցը մեծ հեղինակութիւն ունի անոնց մօտ եւ յաճախ շէյխերու կիցեր ստանձնած են ցեղից ղեկավարութիւնը: Ցեղախումբին նկուղներուն մէջ Ալլու Մուսա, Ալլու Մարհան, Ալլու Տատատա, Ալլու Քաթլ, ճիւղաւորումներն են՝ Ալլու Մուսա, Ալլու Ճահա, Ալլու Ճահամմէտ, Ալլու Խաուսա, Ալլու Ապպուտ Լուայլու, Ալլու Ճահա, Ալլու Ճահամմէտ, Ալլու Խաուսա, Ալլու Ապպուտ Լուայլու: Գեղապետութիւնը կը պատկանի Լուայլու տոհմէն թալիֆա ընտանիքին: Ցեղախումբին կեդրոններն են՝ Քահալա գետի մէկ հարկատուի փին գտնուող Մուսայիտիա գիւղը, ուր 1848ին շէյխ Մանգա թալիֆա բերդ կառուցեց, եւ Տիգրիսէն բաժնուող Մաքաբիա գետի ձախ փին գտնուող Մանար Քապիլ գիւղը, որ կառուցուած է 1876ին, շէյխ Սահիւտի կողմէ:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

## ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԲԱՅՕԹԵԱՅ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ «ՏԱՐԱԺ ԱԼ ՖԱՆ» ԿԸ ԹԵՒԿՆԻՍԵ ԻՐ 11ԴԴ ՏԱՐԻՆ

Միջին Արևելքի մեջ կերպարուեստի ցուցահանդես տուն վաճառի հարաշատուկ վայր մը կը հանդիսանայ ժրմմէյլէյի Սէն Նիքոլայ սասիճանները, ուր ամէն ամբան սկիզբը կը կազմակերպուի «Տարած ալ ֆան» ցուցահանդէսը: 16-22 Յունիսի քսոցթայայ ցուցահանդէսը կը կազմակերպուի Ստանբուլի Կոնստանտինոպոլի Տեւրիկեան տղար Բանատական տղար Աստրալիական տղար Երօ



«Տարած ալ ֆան»-ի որմազը

ժիւրէններու եւ որ կը նպատակադրէ ժրմմէյլէյի Սէն Նիքոլայ սասիճանները աստիճանաբար վերածել մշակութային եւ յատկապէս գեղարուեստի արտայայտութիւններու կերպարուեստի արտայայտութիւններու: Այս ծրագիրին մէկ մասը իրականացած է, նկատի ունենալով, որ տարւան ընթացքին

ներ եւ ձեռարուեստ գործող արուեստագէտներ, որոնք իրենց գործերուն ցուցադրութեան կողքին նաեւ բերած են իրենց վրձիններն ու եռոտանիները եւ անմիջական արուեստի ականատես ըլլալու առիթ կու տան անցորդներուն: Նշենք, որ «Տարած ալ ֆան» շարքին նախաձեռնութիւնը կ'իրականանայ Պէյրութի եւ Ֆրանսական Սէնթ Էթիէն քաղաքի քաղաքապետութիւններուն միջեւ գործակցութեան

**ՕԴԵՐԵՒՈՅԹ**  
  
ՀՈՐԵՔՇԱԲԹԻ,  
18 ՅՈՒՆԻՍ 2003  
ՊԵՅՐՈՒԹ  
ԱՐԵՒՈՏ  
ԶԵՐՍԱՍՏԻՃԱՆ  
ՑԵՐԵԿ 28°C  
ԳԻՇԵՐ 22°C  
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ  
65%

**ԱՅՍՕՐ**  
- Ցուցահանդէս՝ «Տարած ալ ֆան» Սէն Նիքոլայի սասիճաններ, մինչեւ 22 Յունիս:  
- Բանաստեղծութեան երեկոյ, Սէն Նիքոլայի սասիճաններ, ժամը 20:00էն սկսեալ:  
- Ցուցահանդէս՝ «Ուրուկուէյ - Լիպան. Էօն վուայած վեր մ'ե ոսալն», Պրուօ Սֆէյրի գործերը, «Սերվանթէս» Հիմնարկին մէջ, մինչեւ 18 Յունիս:  
- Նկարչական ցուցահանդէս՝ «Թէն Վիուգ», «Էսփան Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 28 Յունիս:  
- Թատրոն «Սոլո», ժամը 20:30ին, «Ալ Մատին» թատրաստահ, մինչեւ 21 Յունիս:

## ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՄՈՒ 18 Յունիս 1953

### ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՊՈՒՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԷՋ

Մեր մարզադաշտը գաղութիս փոքրիկ Հայաստանն է: Ամէն Կիրակի զանազան շրջաններէ եւ հեռուոր թաղերէ երկու սեռէ երիտասարդներ, ծերունիներ այր եւ կից՝ իրենց բոնիկներով հոն կը թափին: Տարիքի, դասակարգի, գուարձութեան, խղերու, զբաղումներու, կերուիտումի այս այլազանութիւնները հայրենիքի ու իստագնացութեան տեսարաններ կը յիշեցնեն...  
Ընդարձակ մարզադաշտը նեղ պիտի գայ հետզհետէ իր շուրջը հաւաքուած երիտասարդութեան եւ համակիր բազմութեան:  
Նաւասարդի աւանդական՝ երկօրեայ տոմարի հանդիսութիւններ: Բարեկենդանի բացօթեայ պարահանդէսներ եւ զուարճութիւններ, մարզադաշտի արդիական բոլոր յարմարութիւններ, կիսաւարտ մեծ շէնքի կից, նոր հիմնարկութեան հանդիսութիւններ, հիմնարկեր, կաթողիկոսական պատուիրակից նախագահութեամբ, այս բոլորը եղանակի բացման հետ մեծ ոգեւորութիւն ստեղծած են մարզադաշտի շրջապատին եւ շրջափակին մէջ:  
Նորընտիր վարչութիւնը մեծ նիւթեր կը թափէ նախորդէն փոխանցուած կիսաւարտ շէնքերը լրացնելու եւ օր առաջ երիտասարդութեան եւ

**ԱՅՍՕՐ՝ 18 ՅՈՒՆԻՍԻՆ**  
■1953 - Մահ Յակոբ Տեր Յակոբեանի (Յ. Իրազեկ):  
■1987 - Հայկական Յեղասպանութեան ձանաչում՝ Երոպական Խորհրդարանին կողմէ:

## ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻՍ ԷԼԻ ՄԸՇԷՆԹԷՖ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ

Չորեքշաբթի, 18 Յունիս, կեսօրէ ետք ժամը 3:00ին պասքեթբոլի «Սաժես» խումբին խմբապետ ԷԼԻ ՄԸՇԷՆԹԷՖ ուղղակի ձայնասփռուող հարցազրոյցի մը ընթացքին կը պատասխանէ ԸԱՆԱ ԸՍՏՍԱՏԻ հարցումներուն:

## ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամանցներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.  
Սուրիական թղթուկի 29,35 - 29,45 լ.ն.  
Իրաքեան տինար 4850,00 - 4860,00 լ.ն.  
Քուեյթեան տինար 5035,00 - 5060,00 լ.ն.  
Յորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ն.  
Պահրէյնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ն.  
Ա.Մ. Էմիրութեանց տիրիամ 410,75 - 412,75 լ.ն.  
Քաթարեան դիալ 413,75 - 415,75 լ.ն.  
Սէուական դիալ 402,00 - 404,00 լ.ն.  
Օմանեան դիալ 3895,00 - 3920,00 լ.ն.  
Եգիպտական կիւնէ 249,00 - 259,00 լ.ն.  
Անգլիական սթերլին 2525,00 - 2535,00 լ.ն.  
Չուիցերիական ֆրանք 1152,00 - 1157,00 լ.ն.  
Թրքական լիրա 106,25 - 106,75 լ.ն.  
Կիպրական փաուստ 3000,00 - 3025,00 լ.ն.  
Ճափոնական հապար եէն 12,65 - 12,75 լ.ն.  
Ափրիկեան հապար ֆրանք 13,15 - 13,20 լ.ն.  
Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն.  
Քանադական տոլար 1117,00 - 1122,00 լ.ն.  
Աստրալիական տոլար 1002,00 - 1007,00 լ.ն.  
Երօ 1775,00 - 1785,00 լ.ն.

● ՈՍԿԻ  
Անգլիական մէկ ոսկի 139,500 - 144,500 լ.ն.  
Իրանեան մէկ ոսկի 125,000 - 130,000 լ.ն.  
Օսմանեան մէկ ոսկի 115,500 - 120,500 լ.ն.  
Մէքսիքական փէսոս 665,000 - 685,000 լ.ն.  
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 17,350,000 - 17,550,000 լ.ն.  
Մէկ օնս ոսկի 360,00 - 360,50 \$  
Մէկ օնս արծաթ 4,61 - 4,63 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.  
Երօ 1.1770 - 1.1775  
Քանադական տոլար 1.3467 - 1.3477  
Չուիցերիական ֆրանք 1.3083 - 1.3093  
Ճափոնական եէն 118.33 - 118.43  
Մէկ սթերլին 1.6770 - 1.6780  
Մէկ քրոնար 560 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՇՆԵԹՈՒՂԹԵՐ  
ԳԻՃԻ Ա. 62 դրամ ԳԻՃԻ Բ. 62 դրամ  
Ա. կարգ 4 7/8 4 7/8  
Բ. կարգ 5 1/8 5 1/8

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ԷՆՐ. 01-252852

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային Իշխանութեան Զարգացման Ժողովը կարիքը ունի Ազգային Առաջնորդարանի նոր դիւանապետի մը:  
Թեկնածուն պարտի լրացնել հետեւեալ պայմանները.  
1.- Տիրապետել հայերէն եւ արաբերէն լեզուներուն եւ ծանօթ ըլլալ անգլերէնի եւ ֆրանսերէնի:  
2.- Ունենալ համալսարանական նուազագոյնը MBA կամ համազօր վկայական:  
3.- Ընդուն ըլլալ արդի վարչագիտութեան եւ փոխ յարաբերութեան ուսման զիտելիքներուն:  
4.- Ծանօթ ըլլալ տնտեսագիտութեան:  
5.- Ունենալ լուրջ փորձառութիւն՝ վերոնշեալ մարզերուն մէջ:  
Թեկնածուն կը պահանջուի՝ Ներկայացնել իր կենսագրականը (CV)՝ հետեւեալ հասցին՝  
- Ազգային Առաջնորդարան, Պուրճ Լամուտ, Արաքս փողոց  
- կամ e-mail: azkayin@inco.com.lb  
- Fax: 01-258305

**ԴԻՄԱՆ**  
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

### «ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՍՏԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻՆ ԺԱՄԱՆԻ 5:00:

### ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՈՒԵՍԻՏԻՑ ԿԱՐԺԱՐԱՆ

Ամառնային օգտակար ժամանակ  
Դաստիարակչական համալսարանի ծրագիր

# ՄԵՍՐՈՊԵԱՆ

2003

5-էն 13 տարեկան պատանիներու համար

**14 Յուլիսէն մինչեւ 5 Սեպտեմբեր**

Արձանագրութիւնները կը սկսին 9 Յունիսին

Ծրագրի մանրամասնութիւնները՝  
**ONLINE**  
www.mesrobian.com  
Պուրճ Լամուտ, Արաքս փողոց, 01-260504

## ԽԱՉԲԱՆԹԻՒ 5464 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՇՈՐԻՉՈՍԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՅ
1. Թաւամազ նուրբ մորթ - Ցուցական անակալան:	1. Շաքարածառ - Չաչ:
2. Արական անուն - Սկառու:	2. Սիրուած զաւակ - Որոճացող կենդանի:
3. Չայնակից տառեր - Մոխիր - Կրկնուած բաղաձայններ:	3. Իրերայաջորդ տառեր - Խաղ:
4. Ողջակէզ - Միջերկրական կողմ:	4. Սրուակ - Ամերիկական առաջին լրագիրը:
5. Սայիտ Աքրի երկերէն - Գեղամ Սարեանի երկերէն:	5. Գետնաստղ - Փափաք:
6. Պատկերահան:	6. Աստուած, ստեղծիչ - Նախանձիք:
7. Անձուկ - Դե՛հ:	7. Անձին այժ - Ճորտին յանձնուած հողաչերտ:
8. Վատ, անարգ:	8. Խիստ տաքութիւն - Անվճար:
9. Վերտիկ օֆերաններէն - Խուժ:	9. Մենք՝ ըստ օտարներու - Բոսոր:
10. Նոյն գիրերը - Մեղկանայ:	10. Նուազարանի յար - Վէճի կռնակ:

ԹԻՒ 5463




### ԽԱՉԲԱՆԹԻՒ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	Խ	Ս	Ս	Ա	Ս	Ա	Ս	Ս	Ս
2	Լ	Ր	Ս	Ա	Ի	Ր	Ս	Ա	Ղ
3	Ա	Տ	Ր	Ա	Ս	Է	Կ	Պ	Ի
4	Տ	Ո	Ք	Պ	Ս	Ա	Պ	Ա	Տ
5	Ե	Տ	Ք	Ր	Ս	Ա	Ր	Ս	Ր
6	Ի	Ա	Ր	Ա	Ս	Ա	Յ	Ի	Ս
7	Ա	Ղ	Ա	Կ	Ի	Ց	Վ	Ի	Ի
8	Խ	Ս	Ա	Ս	Ի	Ս	Ա	Պ	Պ
9	Մ	Ե	Ր	Պ	Ի	Տ	Ա	Ս	Ի
10	Ի	Լ	Ի	Վ	Ա	Ս	Ց	Ա	Լ

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



### ԿՈՉ

Հ. Մ. Ը. Մ. Ի

#### ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ

Սիրելի՛ համակիրներ, ՆԵՐՄԵՒՆ Կ. Մ. Ը. Մ. Ի բաժնի մրցումը տեղի պիտի ունենայ այսօր Չորեքշաբթի, 18 Յունիս 2003, երեկոյան ժամը 8:30ին, Պեյրոնի Բաղադրատարանի դաշտին վրայ:

Յանձնախումբս Կ. Մ. Ը. Մ. Ի համակիրներուն ուշադրութեան կը յանձնէ հետեւեալ կետերը.

1.- Սեօ թիւով ուղղուինք Պեյրոնի Բաղադրատարանի դաշտ՝ քաջալերելու համար մեր խումբը:

2.- Խաղի ընթացքին ըլլանք զուսպ, ունենանք բարձր մարզական ոգի եւ փաստենք բոլորին, թէ Կ. Մ. Ը. Մ. Ի կ'ապրի տիպար եւ օրինակելի մարզիկ է:

3.- Իրաւարարին հասցնին անվայել խօսքեր չուղղենք, որովհետեւ ինչպէս միշտ, դարձեալ տուժող մենք պիտի ըլլանք:

Յոյսով ենք, որ կ'ընդառաջէք մեր կողին եւ 90 վայրկեան ֆանֆարի տողոց հետ կը քաջալերէք Կ. Մ. Ը. Մ. Ի խումբը:

Կ. Մ. Ը. Մ. Ի  
ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒԲ

### ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺՆԻ ՄՐՅԱՇԱՐՔ

## ԱՅՍՕՐ՝ Կ.Մ.Ը.Մ. Ի - ՆԵՐՄԵՒՆ ԿԻՍԱԲԱՐՏԱԿԱՆ (ԵՐԹ) ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄ

Լիբանանի ֆուտպոլի երկու հսկաներ՝ Ներմէ Եւ Հ.Մ.Ը.Մ. Ի այսօր երեկոյան ժամը 8:30ին, Պեյրոնի Բաղադրատարանի դաշտին վրայ կը ճակատին իրարու դէմ, բաժնի մրցաշարի կիսաւարտական երթի մրցումին:

Սիւոյնանութեան տիտղոսին տիրանալու յոյսերը գրեթէ կորսնցուցած Ներմէ 2002 - 2003 եղանակը ձեռնունայն չաւարտելու համար իր ամէն կարելին պիտի ընէ հասնելու աւարտականին, ապա տիրանալու բաժակին, բան մը, որուն վստահաբար պիտի փորձէ արգելք հանդիսանալ Հ.Մ.Ը.Մ. Ի կազմը:

Հակառակ իր ունեցած շատ մը անուանի մարզիկներուն եւ անշուշտ իր հապարտոր համակիրներուն, Ներմէ պիտի չյաջողի նսեմացնել Հ.Մ.Ը.Մ. Ի մարզիկներն ու անոր համակիրները, որոնք այսօր դաշտին թէ թրիպիւններուն մէջ 90 վայրկեան միասնաբար յաղթանակ մը պիտի փորձեն արձանագրել, յիշեցնելով Հ.Մ.Ը.Մ. Ի երբեմնի փառքի օրերը:

Այսօր երեկոյան ժամը 8:30ը բոլորիս ժամադրաւայրը պիտի ըլլայ Պեյրոնի Բաղադրատարանի դաշտը, ուրկէ յաղթական վերադառնալը մեր միակ նպատակն է:

## ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄԻՋՑԱՄԱՔԱՄԱՍԱՍՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔ

Միջամաքամասային ֆուտպոլի մրցաշարքին առաջին օրը, այսօր, տեղի պիտի ունենան երկու մրցումներ՝ Ա. խմբակէն ներս:

Բացման մրցումին, որ տեղի պիտի ունենայ «Սթաւո Տը Ֆրանս» մէջ, ժամը 19:00ին՝ Պեյրոնի ժամով, Նոր Զեյանտա պիտի ճակատի ճափոնի դէմ: Օրուան երկրորդ մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 22:00ին, որուն ընթացքին մրցաշարքը հիւրընկալող երկիրը՝ Ֆրանսա, Լիոնի մէջ պիտի մրցի Քոլոմպիոյ դէմ:

## ՇՈՒԷՅՐԻ ԵՒ ԺԱՐՈՒՏԻՆ ԴԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ ՄՕՏ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ նախարարութեան իր կեդրոնատեղիին մէջ ընդունեց պատեթիպոլի Ռիտտի եւ Սաթէս ակումբներուն նախագահները՝ Հիլամ Ժարուտին եւ Անթուան Շուէյրին:

Երկու ակումբներուն պատասխանատուները նախարար Յովնանեանի հետ ըննարկեցին Լիբանանի պատեթիպոլի աւարտական մրցումին տեղի ունեցած հարցերը: Համաձայնութիւն գոյացաւ յաճախ նմանօրինակ հանդիպումներ կատարել, ոչ մարզական զէպերու առաջընթացին առնելու համար, եւ լիբանանեան պատեթիպոլի վերադարձնելու իր բնականոն վիճակին:

Երկու ակումբներուն նախագահները միացեալ հարցազրուակեցին մարմնակրթութեան նախարար Յովնանեանի շնորհակալութիւն յայտնեցին, խոստանալով երկու ակումբներուն միջեւ սերտ յարաբերութիւնները ամրապնդել:

## ՄՊԱՆԻՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՎՃՌՈՒԻ ԿԵՐԶԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 38րդ եւ վերջին հանգրուանի մրցումները, որոնք տեղի պիտի ունենան յառաջիկայ շաբաթավերջին, պիտի ըլլան ճակատագրական, որովհետեւ այդ արդիւնքներուն յոյսին տակ պիտի յստականայ 2002-2003 եղանակի ախոյեանին անունը:

Դասաւորման պարագլուխի դիրքը գրաւող Ռէալ Մատրիտ, որ այժմ երկու կէտի առաւելութիւն ունի 2րդ դիրքը գրաւող Ռէալ Սոսիետատի վրայ, պարտութեան մատնելու պարագային Աթլետիքո Պիլպոսն՝ պիտի հանդիսանայ ախոյեան, անկախ Ռէալ Սոսիետատ - Աթլետիքո Մատրիտ մրցումին արդիւնքէն:

Ստորեւ՝ 38րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

Ալաւես - Ռեալ Վալադոլիտ  
Ռասիլկ Սանթաբարթա - Օսասունա  
Վիարեալ - Ռեալ Պեթիս  
Տեփոթիլիս - Քարտագեն - Էսպանիոլ  
Ռեալ Մատրիտ - Աթլետիքո Պիլպոս  
Պարսելոնա - Սեթիս Վիկո  
Սելիլլա - Վալենսիա  
Մալորքա - Մալալկա  
Ռայա Վալենսիա - Ռեքրեաթիւս Զուլեյվա

●ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐԵՈՒՄՆԵՐԷՆ ԱՆՈՂ ԸՆԳՀԱՆՈՐ ԳԱՍԱՆՈՐՈՒՄԸ ԿՐՆԵՐԿԱՅԳՆԷ ՀՆՏԵՆԵԱԼ ՍԿՈՐԸ:


	ԿԻՏ
1.- Ռեալ Մատրիտ	75 (83-41)
2.- Ռեալ Սոսիետատ	73 (66-42)
3.- Տեփոթիլիս - Քարտագեն	69 (65-46)
4.- Սելիլլա	61 (45-34)
5.- Վալենսիա	57 (53-35)
6.- Աթլետիքո Պիլպոս	55 (62-58)
7.- Պարսելոնա	53 (61-47)
8.- Ռեալ Պեթիս	51 (52-52)
9.- Սելիլլա	50 (38-36)
10.- Մալորքա	49 (48-56)
11.- Աթլետիքո Մատրիտ	47 (51-53)
12.- Մալալկա	46 (44-48)
13.- Ռեալ Վալադոլիտ	45 (36-39)
14.- Վիարեալ	45 (43-49)
15.- Ռասիլկ Սանթաբարթա	44 (52-61)
16.- Օսասունա	44 (37-46)
17.- Էսպանիոլ	43 (47-52)
18.- Ռեքրեաթիւս Զուլեյվա	35 (35-61)
19.- Ալաւես	34 (37-67)
20.- Ռայա Վալենսիա	31 (31-62)

### ԹԵՆԻՍ. ՈՒՍՊՈՒԼՏԸ

## Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ՝ ՅՈՒՆԻՍ 23ԻՆ

Երէկ, Լոնտոնի մէջ (Բրիտանիա) տեղի ունեցաւ Ուիմպլերի թենիսի կրան շէֆ միջազգային մրցաշարքին վիճակաձգութիւնը: Մրցաշարքը պիտի սկսի յառաջիկայ Յունիս 23ին:

Հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան, որ այս մրցաշարքին իր վերջին պատրաստութիւնները տեսաւ մասնակցելով Նոթթինկհեմի մէջ (Բրիտանիա) տեղի ունեցած միջազգային մրցաշարքին (կասնաչ խոտի վրայ), Ա. հանգրուանին պիտի ճակատի բրիտանացի Ալեքս Պոկտանովիչի դէմ: Նշենք,



Սարգիս Սարգսեան

թէ Նոթթինկհեմի այդ մրցաշարքին Սարգսեան Ա. հանգրուանին իսկ զուսպ մնաց, 6-4, 3-6 եւ 6-3 արդիւնքով պարտուելով մարտը Հիլամ Արագիէն:

Ուիմպլերի մրցաշարքին ճիշդ գասուած արժանութիւնայ Դաւիթ Նալպանտեան Ա. հանգրուանին պիտի ճակատի Վլադիմիր Վոլչեքովիչի դէմ:

Անցեալ տարի նոյն այս մրցաշարքին փոխախոյան հանդիսացած Նալպանտեան, իր կարելին պիտի ընէ այս տարի աւելի լաւ արդիւնք արձանագրելու համար: Գ. հանգրուանին Նալպանտեան իր դէմ կրնայ ունենալ 28րդ դասուած Ուէյն Յերէյրան (Հար. Ափրիկէ), որ խոտի վրայ տեղի ունեցող մրցաշարքերուն կը նկատուի վտանգաւոր մրցակից մը:

Աղջկանց Ա. հանգրուանի մրցումներուն զուսպ մնալու համար Մարի-Գայիանէ Միքայելեան իր դէմ պիտի ունենայ ամերիկացի Մարիա Լըվինը:

Որոշ մարզիկներ, որոնց կարգին թիւ 1 դասուած Լէյվըն Հիլտիթ (Աւստրալիա), ամերիկացի Վինըս Ուիլիեմս (դասուած 4րդ) եւ ռեթիւներ, առանց Ա. հանգրուանի մրցումներուն մասնակցելու արդէն իսկ ապահոված

Ստորեւ՝ Ա. հանգրուանի կարեւորագոյն մրցումներուն յայտագիրը:

### ՏԳՎԸ

Տալիտ Սանկուլիներ - Սալիտ (Իտալիա) - 5.- Էնտի Ռոտիք (Մ. Ն.)

Կրիստինա Մարկուս (Ֆրանսիա) - 28.- Ուէյն Յերէյրան (Հար. Ափրիկէ) Ալեքս Քորեթիս (Սպանիա) - 10.- Թիմ Զեմման (Բրիտանիա) 13.- Սեպտիմիան Կրոման (Ֆրանսա) - Թոմաս Էնքվիսթ (Շուէտ) Սարգիս Սարգսեան (ՀԱՅԱՍՏԱՆ) - Ալեքս Պոկտանովիչ (Բրիտանիա)

4.- Ռոմէ Ֆետտերի (Պոլոնիա) - Հիլտիթ Քարոլ Լի (Հար. Քորեա) Քարոլ Պէր (Սլովակիա) - 16.- Միհայիլ Եուստին (Ռուսիա) 9.- Ռայնըր Շուբլըր (Գերմանիա) - Միշէլ Քրաթչովիլ (Չեխիա) Ֆեռնանտո Վիչենթե (Սպանիա) - Թոտ Մարթին (Մ. Ն.)

Ճոն Վան Լոթիմ (Հոլանտա) - 17.- Վուսաւ Բուրքի (Պարագվայ) 6.- Դաւիթ Նալպանտեան (Արժանութիւն) - Վլադիմիր Վոլչեքովիչ (Պոլոնիա) 27.- Եուսէ Այնուի (Մարոք) - Մարք Հիլթըն (Բրիտանիա) Ճեյմի Տեյկասո (Բրիտանիա) - 2.- Անտրի Ակասի (Մ. Ն.) 12.- Փարտորն Սրիշափան (Թայլանտ) - Տոմիթիք Հրպարի (Սլովակիա) 25.- Թոմի Ռոպրեսո (Սպանիա) - Խոսէ Աքասուսո (Արժանութիւն)

Ճոն Վան Լոթիմ (Հոլանտա) - 17.- Վուսաւ Բուրքի (Պարագվայ) 6.- Դաւիթ Նալպանտեան (Արժանութիւն) - Վլադիմիր Վոլչեքովիչ (Պոլոնիա)

## ՀԱՅՆՔԵՍ ՊԻՏԻ ԼՔԷ ՊԻԼՊԱՆՆ

Աթլետիքո Պիլպոսի գերմանացի մարզիչ Եուսէ Զայնքէս երէկ իր կատարած մամուլայ ասուելիս նշեց, թէ այս եղանակին աւարտին պիտի լքէ իր կազմը եւ պիտի միանայ գերմանական Եւրոպէի Եւրոպէի ակումբին:

58 տարեկան գերմանացին, որ վերջին երկու եղանակներուն Պիլպոսի մարզիչն էր, յայտնեց, թէ ընդունած է գերմանական կազմին առաջարկը, թէ եւս այն համոզումը ունէր, որ Պիլպոս մարզիչի իր ասպարէզին վերջին հանգրուանը պիտի ըլլար:

16 տարեբար առիթներով, Հայնքէս հեռացած է Գերմանիայէն, այլ խումբերու միանալով: Անոր վերջին գերմանական ակումբը հանդիսացած էր Այնթապի Ֆրանքֆորթ, որմէ հեռացած էր 1995ին:

●ԼՈՒԻՅԻ ՍԻՄՈՆԻ ԵՐԷԿ ԵՄԵՆԵՅ, թէ 2003-2004 եղանակին պիտի մնայ իր կազմին՝ Անթոնայի մարզիչ, որ 2002-2003 եղանակի աւարտին բարձրացած էր Ա. դասակարգ:

64 տարեկան Սիմոնի, որ նախապէս եղած է Ինթէր Միլանի մարզիչ, յայտնեց, թէ ոչ մէկ պատճառ ունի իր կազմին հեռանալու, նկատի ունենալով որ երկու կողմերն ալ գոհ են իրարմէ:

Ժան Ռընէ Լիսնար (Ֆրանսիա) - 3.- Խուսէ Բարլոս Ֆետերի (Սպանիա) 7.- Կիլբերտ Գորիս (Արժանութիւն) - Օլիվիէ Ռոշիւս (Պոլոնիա) 20.- Եւգենի Քաֆեյիքով (Ռուսիա) - Ռայմոն Սլուպըր (Հոլանտա) Լուիս Զոննա (Փերու) - 11.- Ելիթ Նովար (Չեխիա) Մարիանո Զապալեթա (Արժանութիւն) - Մարք Ֆիլիպուսի (Աւստրալիա)

Ժան Ռընէ Լիսնար (Ֆրանսիա) - 3.- Խուսէ Բարլոս Ֆետերի (Սպանիա) 7.- Կիլբերտ Գորիս (Արժանութիւն) - Օլիվիէ Ռոշիւս (Պոլոնիա) 20.- Եւգենի Քաֆեյիքով (Ռուսիա) - Ռայմոն Սլուպըր (Հոլանտա) Լուիս Զոննա (Փերու) - 11.- Ելիթ Նովար (Չեխիա) Մարիանո Զապալեթա (Արժանութիւն) - Մարք Ֆիլիպուսի (Աւստրալիա)

Ժան Ռընէ Լիսնար (Ֆրանսիա) - 3.- Խուսէ Բարլոս Ֆետերի (Սպանիա) 7.- Կիլբերտ Գորիս (Արժանութիւն) - Օլիվիէ Ռոշիւս (Պոլոնիա) 20.- Եւգենի Քաֆեյիքով (Ռուսիա) - Ռայմոն Սլուպըր (Հոլանտա) Լուիս Զոննա (Փերու) - 11.- Ելիթ Նովար (Չեխիա) Մարիանո Զապալեթա (Արժանութիւն) - Մարք Ֆիլիպուսի (Աւստրալիա)



Եուսէ Զայնքէս

1.- Սերենա Ուիլիքմս (Մ. Ն.) - Ժիլ Բրեյլպաս (Մ. Ն.) Անցելիքա Ռոսէս (Գերմանիա) - 15.- Էլենա Տեմենքիեա (Ռուսիա) Մարիա Ըրվիլ (Մ. Ն.) - Մարի-Գայիանէ Միքայելեան (Չեխիա) 3.- Ժիլպրէն Զեմին-Հարտե (Պոլոնիա) - Ժուլիտա Վաքուլեցքո (Ուքրաինա) Մարի Քիրս (Ֆրանսա) - Էլիթ Քարթիլ (Մ. Ն.) 5.- Լիլիտա Տեյկըն-Փորթ (Մ. Ն.) - Մամնըր Սրոսիլ (Աւստրալիա) 17.- Ամանտա Քոնքըր (Հար. Ափրիկէ) - Տեյլի Ռեկտիպիլ (Մատրիտ) 29.- Նաուիլա Փեթրովա (Ռուսիա) - Թաթիանա Կարպիլ (Իտալիա) 7.- Չանտա Ռուպիլ (Մ. Ն.) - Իվա Մալոլի (Սլովակիա) Անքա Պառն (Գերմանիա) - 12.- Մալուսիա Մալիլեա (Պոլոնիա) Ժանք Զուսարովա (Սլովակիա) - 22.- Նաթալի Տըշի (Ֆրանսա) Ռոլանտ Նեֆֆա - Տը Լոս Ռիոս (Փարակուէյ) - 2.- Քիմ Քիլքըր (Պոլոնիա) 11.- Ելենա Տոքիլ (Սերբիա) - Էլենա Պալաշա (Բրիտանիա) 10.- Անաստասիա Միսքիս (Ռուսիա) - Զեմինքա Նալիովա (Սլովակիա) 23.- Լիլիտա Ռեկտի (Մ. Ն.) - Սթեֆանի Ֆորթիք (Ֆրանսա)

## ՊԵՔԸՄ ԵՒ ՍԻՄՈՆԻ ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏԻ ԱՍՏԳԵՐՈՒ ՀՈՅԼԻՆ

Սպանական ռաթիոկայանի մը համաձայն, Մանչեսթըր Եւրոպիանի աստղերէն Տէյլիտ Պեքսմ երէկ համաձայն գտնուեցաւ Չորո աւարտուած պայմանագրով իր մը ստորագրելու: Ռէալ Մատրիտի հետ, փոխան 25 միլիոն եւրոյով (29,6 միլիոն ամերիկեան տոլար):

Ըստ Ռէալ Մատրիտի պատասխանատուներուն, 28 տարեկան Պեքսմ Մատրիտի համակիրներուն պիտի ներկայանայ Յուլիոս 2ին:

